

ՔԻՒՐԴԵՐԸ ԻՐԱՆՑ ՏԱՆԸ.

4. ԱՌԱՔԵԼՆԱՆԻ.

Ն Ա Խ Ա Ռ Ա Ն

Քիւրդերի մասին շատ բան կազ գրուած և ուսումնասիրութեան շատ մեծ նիւթ կազ եւրօպական, ռուսաց և նոյն իսկ հայոց գրականութեան մէջ, բայց այնուամենայնիւ սրանք դեռ անծանօթ են մնում մանաւանդ մեզ հայերիս, որ, դարերով նրանց մէջն և նրանց հետ ենք ապրում: Քիւրդերն մինչև այժմ հետաքրքրել են մեզ իբրև պատերազմող, աւարառու և չափշտակիչ տարր և ոչ իբրև ազգագրական նիւթ և սակայն, իբրև ազգագրական նիւթ, նրանք ահագին հետաքրքրութիւն են ներկայացնում: Կամենալով մեր կարողութեան չափ օգնել մեր ազգագրողներին, անօգուտ չը համարեցինք հրատարակութեան տալ մեր ձեռքի հետեւեալ նիւթը քիւրդերի մասին, որ արդիւնք է մեր սեպհական ուսումնասիրութեան. այդ ուսումնասիրութիւնը մենք կատարեցինք, պ. Ա. Ճալալեանի օգնութեամբ, 1880 — 1881 թ., երբ տեղի ունեցաւ Քէյս Իբադուլլայի հռչակաւոր արշաւանքը և երբ մենք գնացինք Ատրպատական, իբրև ռուսաց «ГООСЪ» լրագրի սեպհական թղթակից: Այդ լրագրի մէջ այն ժամանակ գրուած մեր թղթակցութիւնները պարունակում էին միայն այդ արշաւանքի և այսպէս կոչուած «քիւրդ-պարսկական» պատերազմի նկարագրութիւնը: Ներկայ նիւթը դեռ ոչ մի տեղ չէ տպուած և վերաբերում է բացառապէս այն քիւրդերին, որոնք ապրում են թիւրք-պարսկական սահմանագլխի վրայ:

Բայց առաջ աւելորդ չենք համարում մի քանի ընդհանուր տեղեկութիւններ հաղորդել առհասարակ քիւրդերի մասին:

Քիւրդ ցեղը սփռուած է արևմտեան Ասիայի մեծ մասի, մօտ 2000 քառակուսի մղոն տարածութեան վրայ, երեք պետութիւններէ— Ռուսաստանի, Թիւրքիայի և Պարսկաստանի տիրապետութեան տակ: Դա իսկապէս թափառական, վրանաբնակ ցեղ է և այդ պատճառով դժուար է որոշել մի երկիր, որին կարելի լինի «Քիւրդստան» անունը չատկացնել: Ռուսաստանում քիւրդերը թափառում են Արարատ սարի հիւսիսային սարահարթերի վրայ, Արաքս գետի աջ ափին, ինչպէս և

Սեանայ լճի հարաւային և արեւելեան սարահարթերի վրայ, Թիւրքի-
այում, թէ լոկ անուանապէս, և թէ իրողապէս սուլթանի իշխանու-
թիւնը ճանաչող քիւրդերը ապրում են այն տեղերում, որոնք առաջ
կազմում էին Սուլէյմանիէ, Ջահգուր, Բաղդադ, Մօսուլ և Վան իլա-
յէթները. մի մեծ մասն ևս ապրում է հին ասսիրիական թագաւորու-
թեան դաշտերի վրայ, Զազրոս լեռնաշղթայի և Տեգրիս գետի մէջ
տեղ, ինչպէս և Դամասկոսի և Հալէպի փաշայութիւնների մէջ. կան
քիւրդեր նաև Էրզրումի և Բաբերդի մէջտեղում: Զազրոս լեռնաշղ-
թայի արեւմտեան կողմում, հին Միդիայի մի մասում բնակուող քիւր-
դերը գտնւում են Պարսից տիրապետութեան տակ: Այդ երկու երկր-
ների մէջ տեղ գտնւում են անկախ կամ ազատ քիւրդ ցեղերը, Հաք-
քարիայի դաշտերի վրայ: Բացի դրանից, Պարսկաստանում, քիւրդա-
կան մի քանի ցեղեր բնակւում են Լօրստանում, մինչև Պարսից ծոցը
և նոյն իսկ Խորասանում:

Ռուր աշդ քիւրդերի թիւը հաշւում են 2—3 միլիօն, թէև կան
և այնպիսի աշխարագիրներ, որոնք կարծում են, թէ քիւրդերը մի մի-
լիօնից աւելի չեն: Մինչև այժմ վերջնականապէս չէ որոշուած այս
հարցը, թէ ինչ ծագում ունեն քիւրդերը. կազմում են արդեօք մի
ինքնուրոյն ցեղ, թէ խառնուրդ են շատ ցեղերի և ազգերի, օրինակ
հին մեդիացիների, մօնգօլների, թաթարների կամ սկիւթացիների,
հայերի, թիւրքերի և արաբների, ինչպէս շատերն են ենթադրում:
«Քիւրդ» բառը պարսկերէն է, հին սլարսկերէն և նշանակում է ու-
ժեղ, հզօր. բայց թիւրքերը և թաթարները հնչում են «կիւրդ», որ
դարձեալ սլարսկերէն է և նշանակում է «գալ», ու դրանով կամենում
են ցոյց տալ աշդ ցեղի գիշատիչ յատկութիւնը: Մի քանի պատմա-
բաններ ևս կարծում են, թէ քիւրդերը այս ժողովրդի սերունդն են,
որ յայտնի էր դեռ Քսէնոֆոնի ժամանակ «կարդուխ» անունով և
բնակւում էր Զազրոսի այն սարահարթի վրայ, որ ընկնում է Վանի և
Ուրմիայի լճերի մէջ տեղ: Հայ պատմաբանների ասելով, հայոց թագա-
ւորութեան ժամանակ, այժմեան «Քիւրդստան» ասուածը կոչւում էր
«Աորդ կամ Աորդեաշք»: Իրանք քիւրդերը աւանդաբար ասում են, որ
սերուած են հագաւացիներից, այսինքն արաբներից. հաւանական է
կարծել, որ նրանց ցեղապետների և իշխանների մեծ մասը առաջ են
եկել արաբներից, խալիֆների տիրապետութեան ժամանակ:

Այդպէս է և քիւրդերի լեզուն. բուն, մաքուր քիւրդական լե-
զու չը կայ, այլ նա խառնուրդ է արաբերէն, պարսկերէն, թիւրքե-
րէն և նոյն իսկ սիրիական—քաղղէական ժողովրդական բարբառների.
ոմանք կարծում են, որ նա պարունակում է և յունական բառեր.
զանազան տեղերի քիւրդեր զանազան բարբառներ ունեն. մաքուր

բարբառն շատ մօտ է այժմեան պարսկերէնին. մի քանի ցեղեր ևս խօսում են թիւրք-թափառական կամ մեր երկրի թուրքերի (Ատրպատականի) լեզուով: Բարբառների մէջ ամենագլխաւորն համարւում է Զազա բարբառը, որով խօսում են Մուշի և Բիթլիսի մէջ տեղ սրբառուած քիւրդերը. կան և ուրիշ չորս գլխաւոր բարբառներ—Հաֆաշի, Մուհրի, Զազագ և Եզիդի:

Նշանաւոր է այն հանգամանքը, որ քիւրդերը սեպհական գիր չունին, նրանք գրում են, սովորաբար, պարսկերէն, կամ արաբերէն. այդ պատճառով նրանք գրականութիւն ևս չունին:

Արօնով մուսուլման են, սիւննի աղանդից և սաստիկ ատում են շիաներին, աւելի քան գեավուրներին:

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ անցնենք մեր նիւթին ¹⁾:

Ա. ՔԻԻՐԴԵՐԻ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ:

Պարսկա-թիւրքական սահմանագլխում Քիւրդերի բռնած տեղերն են՝ Սալմաստի և Ուրմիայի կողմերում-Սոմայ, Բրադոշտ, Մեարկաւար, Տաշտ, Լաչիջան, Հին-Լաչիջան, Ուշնու, որ քաղաք է իւր գիւղերով, Տաշտաբել, Սուլդուզ, Սովուխ-բուլաղ (նոյնպէս քաղաք է) Սինա, Սախկըզ, Քիրմանշահ (քաղաք). այդ բոլոր տեղերը լեռնային են, բարեբեր և առողջ օդ ունեն:

Բ. ԳԼԽԱՒՈՐ ՑԵՂԵՐԸ:

Քիւրդերը բաժանւում են զանազան մանր ցեղերի, որոնց գլխաւորներն են. 1) Մեանգիւռ, 2) Մսմաշ, 3) Դէպոքըի, 4) Միքըի:

¹⁾ Զատ ցաւում ենք, որ մենք չը կարողացանք օգուտ քաղել մի նշանաւոր ազգագրական նիւթից քիւրդերի մասին, որի հեղինակն մեր աշխարհիկ գրականութեան հայր—Խաչատուր Աբովեանն է: Երբ մեր նիւթը դասաւորել և արդէն սրբագրում էինք, մեզ պէտք եղաւ մի թիւրքամասնութիւն պարզելու համար քրքրել մեր մատենադարանը. այդտեղ, մի գերմաներէն գրքի մէջ, որ կրում է: *Reise nach Persien und dem Lande der Kurden von Moritz Wagner, Leipzig, 1852* մենք մի յանկարծական գիւտ արինք. գրքի վերջում իբրեւ յաւելում—որը մենք առաջ չէինք նկատել—տպագրուած է երկու մեծ ազգագրական յօդուած *„Beiträge zur Ethnographie des Orients“* վերնագրով—քիւրդերի եւ եզիդիների մասին: Գրքի հեղինակը ասում է, որ այդ յօդուածները կազմել է „Էջմիածնի հոգեւոր դպրոցի նախկին աշակերտ, Գորպատի համալսարանի ուսանող, — որ և ընկերացաւ պրօֆեսոր Պարրօտին Արաբատի գագաթը բարձրանալու—Խաչատուր Աբովեանը, որ այժմ Երևանի նահանգական դպրոցի վերատեսուէն է“: Աբովեան իր ձեռագիրը յանձնել է Վազներին և սա էլ կցել է իր հեղինակութեան: Որքան մենք գիտենք, Աբովեանի այդ ազգագրական աշխատութիւնը անձանօթ է մնացել մինչև այժմ հայ գրականութեան մէջ: Յաշխատենք թարգմանել և մի ուրիշ անգամ լոյս ընծայել:

5) Փիրան, 6) Զարգայ, 7) Չաքաք, 8) Ռովանդ, 9) Զիլան, 10) Պրադոշտ, 11) Հարքի, 12) Ռավանդ, 13) Եզդի: Մանր ցեղերը թէ պարսկաստանում և թէ Թիւրքիայում միշտ դաշնակցութիւն են ունենում գլխաւոր ցեղերի հետ:—Պարսկաստանում, գլխաւոր բնակավայր Սովուխբուլաղի գաւառում գտնուող քիւրդերն պատկանում են հետեւեալ ցեղերին. 1) Դէպոքրի, որ մի քանի ցեղապետներ ունի, որովհետեւ բաղկացած է մի քանի գիւղերից և իւրաքանչիւր գիւղատէր համարւում է նոյն գիւղի ցեղապետ, բայց նրանց մէջ գլխաւորն է Պաուր—Աղան, որ 1500 տուն ժողովուրդ ունի և շատ հարստութիւն. 2) Միքրի ցեղն, որի գլխաւոր ցեղապետն էր Մէջիդ խանը կամ նրա որդի Խան Բաբայ-խանը, որը քիւրդերի ասպտամբութեան ժամանակ սպանուեց պարսիկ զօրքերից. միւս ցեղապետն է Ֆէյզուլա-բէկն որ շատ ժողովուրդ ունի և ինքն 60 տարեկան լինելով 22 որդի ունի. 3) Սովուղբուլաղից 2 մղոն հեռաւորութեամբ գտնւում է Մանկուռների ցեղն, որ մօտ 2000 տնից է բաղկացած. նա նշանաւոր է իր կարողութեամբ և ցեղապետն է Համգայ-աղան. 4) նոյն տեղից 8 մղոն հեռու գտնւում է Լաչիջանը, որտեղ բնակւում է Մամաշ կոչուած ցեղը, որ շատ քաջ է և բաղկացած է 2500 տնից. ցեղապետն է Մամադ աղան. 5) նրա ետեւում գտնւում է Հին-Լաչիջանը, ուր բնակւում է Փիրան ցեղը, որ 1000 տուն է: 6) Զարգաներն բնակւում են Ուշնիում, 800 տուն ցեղապետն է Աբդուլլահ խանը. 7) Ռաւանդ կոչուած ցեղն 300 տուն, բնակւում է Դաշտապելում, սա ամենավայրենի և կատաղի ցեղն է, ամենափոքր քանի համար սպանութեան են դիմում. ցեղապետն է Մահմալ աղան. 8) Չաքաքները: 4000 տուն, բնակւում են Սոմայում և Պրադոգտում, որ Պարսից սահմանագլուխն է. ցեղապետն է Ալի խանը: Չաքաքներն շատ սրտոտ մարդիկ են և մեծ թշնամութիւն ունեն Օսմանցոց կողմում գտնուող մի ցեղի հետ, ուստի յաճախ լինում են պատերազմներ: Կան և ուրիշ մանր ցեղեր, բաղկացած 200 և մինչև 50 տնից: Մանգուռ ցեղն երեւելի, քաջ և յանդուգն է, պարապում է միշտ աւազակութեամբ, և համարեա ապստամբական դիրքի մէջ է գտնւում դէպի պարսիկները: Նոյնպէս քաջ է Մամաշ կոչուած ցեղը. սա 50 տարի առաջ Կեարմիանից գաղթել է աչստեղ և բնակութիւն է հաստատել Լաչիջանում. գաղթելիս հազիւ 150 տուն են եղել, այժմ մինչև 2500 տան է հասնում նրանց թիւը:

Բաժանուած լինելով աչսքան մանր ցեղերի, և իբրև նախնական վայրենի ժողովուրդ վերին աստիճանի վրէժխնդիր հոգի ունենալով, աչդ ցեղերի մէջ յաճախ պատահում են կռիւ և արիւնահեղ պատերազմներ. ամեն ցեղ խիստ նախանձոտ է իր պատուին: Մի փոքր, անոտի պատճառ, վիրաւորանք բաւական է, որ երկու ցեղերն սկսեն

միմեանց հետ կուուել, միմեանց կոտորել. շատ անգամ թշնամութիւնը, կռիւը տարիներով շարունակուում է մինչև որ մի ցեղն բոլորովին ոչնչանում է. Ահա մի դէպք. մի օր մի մանկուռ ազնուականի կին, գալով մամաշների մէջ, ճանապարհին մի մամաշ ազնուականից բռնաբարւում է. կինը վերադառնալով տուն, պատմում է եղելութիւնը ամուսնուն և ցեղապետին: Հետեւեալ օրն մանկուռները պատերազմ են հրատարակում մամաշների դէմ. երկու կողմից ևս մեծ քանակութեամբ ձիաւորներ են դուրս գալիս, կռիւը սկսւում է Սովուխ-բուլաղի մօտ: Սկզբում յաղթւում են մամաշները և մինչև Սուլդուզ յետ են մղւում, բայց կարափափախ ձիաւորների մի գունդ նրանց օգնութեան հասնելով, մամաշները վերադառնում և յաղթում են թշնամուն. այդ պատերազմում 1000-ից աւել մանկուռ է փչանում, իսկ մամաշներից մինչև 200 հոգի. երկու կողմի ցեղապետներն ևս սպանւում են. մի քանի անգամ կրկնուեց այդ պատերազմը և մինչև օրս էլ այդ երկու ցեղերը անհաշտ թշնամի են և շարունակում են վրէժխնդրութիւնը:

Գ. ՔԻՒՐԴԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԸ:

Դասակարգութիւնն հետեւեալն է. ա) հասարակ ժողովուրդ կամ րայա, որ շատ ճնշուած է և կատարում է բոլոր աշխատութիւնը. բ) աղաների ծառաներն, որ մի աստիճան բարձր են և ազդեցութիւն ունեն ժողովրդի վրայ. գ) աղաները կամ ազնուականներ, որոնք միակ սեպհականութեան տէր են, մեծ ազդեցութիւն ունեն ժողովրդի վրայ. ձիավարութեան և պատերազմական գործերի մէջ կրթուած են, որովհետև ուրիշ զբաղմունք չունեն, հող չեն հերկում և մշակում թողնելով այդ հասարակ ժողովրդին: Մի ազնուական կամ աղա իրաւունք ունի իր ժողովրդի ձեռքից յափշտակելու նրա բոլոր ունեցածը և ժողովուրդը չէ կարող ամենափոքր ընդդիմութիւն անել: Եթէ մի գիւղի մի ազնուական մի ուրիշ գիւղի հասարակ ժողովրդի հետ կուուելու լինի, ոչ ոք նրա վրայ ձեռք չէ կարող վերցնել, այլ միայն ազնուականը կարող է կուուել: Ազնուական դասի ձեռքումն է ժողովրդի կառավարութիւնը, պահպանութիւնը, իսկ հասարակ ժողովուրդը մշակ է: Յետոյ գալիս է դարվիշների, սէյիդների և մանր շէյխերի, կամ հոգևորականութեան դասը, որ մեծ համարում և պատիւ ունի թէ աղաների և թէ ծառաների առաջ: Զինւորական դասակարգ չատկապէս չը կայ, որովհետև բոլոր քիւրդերը պատերազմի ժամանակ զինւոր են, մինչև անգամ կանայք ևս գնում են պատերազմ օգնելու իրենց ամուսիններին: Հասարակ ժողովուրդը սաստիկ տոգէտ է. ազ-

նուականներն նույնպէս ոչ մի ուսում և կրթութիւն չունին. շատ քիչերը գրագէտ են. գրել կարողալ գիտեն միայն մօլլաներն: Քաջ առհասարակ թէ ազնուական, թէ ժողովուրդ խիստ մոլեռանդ են. մեծ չարգանք են տածում գէպի իրանց շէյխերը, գէրվիշները և եթէ մի ազնուական մի քանի ձիաւորով կամենայ աւագակութեան և սպանութեան գնալ, աչս ժամանակ ևս իր նամազը, օրեկան 5 անգամ, կանի անպատճառ:

Քիւրդերի գարվիշները բոլորովին չեն նմանում պարսից գարվիշներին, իրանց մագերն երբէք չեն խուզում և երկար հիւսած ձիգ են տալիս իրանց ետեւից կանանց նման, իւրաքանչիւր գարվիշ ձեռքին ունի մի դաւալ. ամեն տան կամ խանութի առաջ կանգնելով երգում է և դաւալն ածում. իր երգերի մէջ նա գովասանում է շէյխերին, մանաւանդ իրենց մէջ հերոսի և սրբի հռչակ փայելող շէյխ Աբդուլ Քադրին, որ ապրում էր սրանից 100 տարի առաջ և մեծ ժողովրդականութեան հռչակ ունէր: Այդ շէյխի սերնդից է շէյխ Իբրահիմը, ուստի և այդ պատճառով քիւրդերը բոլորն հնազանդւում էին նրան. յետոյ գէրվիշներն երգում են հոգեւոր և մարմնաւոր երգեր ստանալով մի սև փող, շարունակում են իրանց աչցելութիւնը: Ամեն հինգշաբթի երեկոյ գարվիշներն հաւաքւում են մրդկիթի գաւիթն և սկսում են զիքր անել (աղօթք, գոհաբանութիւն, որն միայն գէրվիշներն իրաւունք ունեն անելու) հետեւեալ կերպով առաջ բոլորն միասին սկսում են ածել իրանց դաւալները միակերպ և թնդացնում են օդն իրանց նուագածութեամբ և ասում են «լաիլլայ, իլ ալլահ, շաիլլոտ իլ ալլահ» մինչև 100 անգամ, երբեմն մինչև 300 անգամ և այսպէս շատ և շուտ, որ շատերի բերանն սկսում է փրփրել և ուշքից գնում են: Յետոյ սկսում են միմեանց ետեւից շուտ շուտ ասել. «հէյա, հէյա», (ողջ է, ողջ է,) և յետոյ քիւրդերէն հոգեւոր երգեր. այդ զիքրը անելիս, գարվիշներն իրանց դաւալների բաղխման ձայնից տաքացած և ինքնամոռացութեան հասած, սկսում են երբեմն և դաւալներով միմեանց գլխին խփել, յետոյ իրանց գլուխներն էլ պատերին խփել, երբեմն կրակի մէջ մտնել, կրակն իրանց ձեռքի վրայ դնել, այնպէս որ անձանօթ մարդն կարող է նրանց խենթերի տեղ ընդունել. բայց հանգիսական քիւրդերն հիանում են և երանութիւն են կարգում այդ գարվիշներին, որ այդ տեսակ մի մեծ հոգեւոր ճգնութիւն են կատարում, որի վարձն հանդերձեալ կեանքում պիտի ստանան:

Այդ գերվիշներն լինում են զանազան շէյխերի միւրիդներ (աշակերտ), որոնք պատրաստ են ամեն տեղ իրանց տիրոջ համար կեանքըն գոհել. նրանք ընկերանում են շէյխին ուր որ գնում է, նրա

ձիի առաջն ընկած և զաւալներովն ածելով զիքը են անում ու շէշ-խին ու նրա տոհմին գովասանք կարդում, երբեմն և նրա ոտքը համբուրելով: Դէրվիշներն ստանում են գիւղականներից կալի ժամանակ որոշ բաժին կամ պտուղ:

Դ. ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՁԵԻՐ

Թէև քիւրդերը Թիւրքիայի և Պարսկաստանի հպատակ են համարւում, բայց ժողովրդի կառավարութիւնը ազնուական դասի ձեռքումն է: Իւրաքանչիւր ցեղապետ իր ցեղի տէրն է և ինքնիշխան կառավարիչը, դատաւորը, ցեղապետներն իրանք ուղղակի վճարում են տէրութեան կառավարիչներին մի որոշ հարկ, այնուհետև ժողովրդի ներքին գործերի կարգադրութիւնը, դատավարութիւնը իրան աղաչին է վերաբերում. իւրաքանչիւր աղայ (աղայութիւնը ժառանգական է) կամ ցեղապետ հաւաքում է իր գաւառի հարկերը, տուրքերը, որոշում է նրանց քանակութիւնը, չափը և յետոյ ինքն վճարում է տէրութեան որոշ հարկը մի մասն փողով, մի մասն բերքով, օրինակի համար՝ համգա աղա Մանգուը տարեկան 200 թուման տուրք է տալիս Պարսից տէրութեան և բոլոր Մանգուը ցեղի հրամանատարութիւնը ու կառավարութիւնը նրա ձեռքումն է, ինքն է նշանակում թէ ամեն մի գիւղ ինչքան պէտք է տալ. պետութեան հարկը վճարելուց յետոյ մնացածն ինքն է վերցնում:

Ե. ՔԻՒՐԴԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ, ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅՈՒՍՏԸ:

Մնունդը՝ նահապետական, պարզ կերակուրներ են-ցամաք հաց, մածուն, պանիր, կարագ, կաթ և թանը՝ իբրև ըմպելիք: Յացտնի է քիւրդերի պանիրը, որ պատրաստում են կաթնից և զանազան տեսակ խոտերից: Դրանք սովորական կերակուրներն են, իսկ հիւրնկալութեան և խնձոյքների ժամանակ, ունեւորների տանը, մատուցանում են խորոված հաւ, գառն, ոչխար, փիլաւ և քուֆտա: Բուն քիւրդական և ընտիր ու համեղ կերակուրներ համարւում են բուրբեկը և բուլլաման. առաջինը այսպէս է պատրաստւում. ոչխարի միսը կտրրտում են դմակով և ճարպով միասին, ածում են երկաթէ խոր սաջի մէջ վրան մի աման ջրախառն մածոն են լցնում և սաջը կրակի վրայ դնելով այնքան խառնում են, մինչև որ եփ է գալիս: Քուլլաման այսպէս են պատրաստում. որևէ անտառի եզրում մեծ կրակ են առնում. կրակի մօտ երկու մետրի չափ մի հօր են փորում, չատակը լցնում կրակի մի մասով, ապա մորթած ոչխարը ամբողջովին փաթա-

թելով մորթու մէջ, դնում են փոսում և մնացած կրակը ածում վրան և երկուսն էլ հողով ծածկում. երկու կամ երեք ժամից չետոյ բանում են հորը, հանում են եփուած ոչխարը և կաշին պոկելով, ուտում են:

Քիւրդերը չափազանց հիւրասէր են. ճաշի ժամանակ տարածում են կաշուէ սփռոցը և դարսում կերակուրները. հիւրին պատուելու ամենամեծ նշանը նրա մօտ մեծ քանակութեամբ հաց դարսելն է. հացի քչութիւնը անպատուութեան նշան է և վիրաւորական: Երբ բուրբելը սաջով բերում դնում են սփռոցի վրայ, ամենքը բոլորում են շուրջը և ձեռներով ուտում: *)

Տղամարդիք հագնում են հաստ կտաւէ շապիկ և ոտաշոր. շապիկի վրայից դացաքի՝ արխալուխ, արխալուղի վրայից փաստակ (թաղիքի կարճ բաճկոն). գլխին դնում են քէչա գլխարկ, վրան փաթաթած մի քանի գոյնգոյն չիթից թաշկինակներ. մէջքին մի չիթի կամ շալի գօտի. աղաները նոյնպէս դադաք են հագնում, երբեմն և մետաքսեայ ձոթից արխալուղ. որ անուանում են ֆիւթակ Ջապիկը և ոտաշորը լինում են փաթսխայից, շատ լայն. շապիկի թևերը մի կեազի չափ լայն և երկար, այնպէս որ ձի հեծած ժամանակ հասնում են մինչև գետնին: Հարուստները գօտու փոխարէն կապում են արծաթէ քամար, բաց թէ հարուստ, թէ աղքատ, թէ աղա, թէ րայա, ամեն մի քիւրդ անպատճառ խրած ունի իր գօտիի մէջ մի դաշոյն, իսկ փոքր ի շատէ ունեւորը, նաև մի գոյգ ատրճանակ մի հրացան էլ ունին և մի նիզակ ձեռքին: Գիշերը քնելուս սովորաբար չեն հանում շորերը և զէնքերը: Աննայք հագնում են կապոյտ կտաւից մի երկար շապիկ մինչև ոտները և նոյն կտաւից մի ոտաշոր, նոյն կտաւից էլ կարում են գօտի մէջքին, իսկ գլուխը փաթաթում են սև մետաքսեայ աղլուխով. ականջներից կախ են տալիս արծաթէ մեծ գնդեր, որոնց ներքևից կախուած են լինում արծաթէ փոքրիկ շղթաներ: Մեծատան կանայք արծաթէ ականջագնդերի տեղ ոսկեայ են գործածում և կապում գմբէթաւոր արծաթէ գօտի, որ սովորաբար, նրանց համար շինում են հրէայ ոսկերիչները. կապոյտ կտաւի փոխարէն, հագնում են կարմիր մետաքսեայ, դանավուղ ոտաշոր և շապիկ, որի վրայից մետաքսեայ կերպասից ֆիւլաջա:

*) Ընանապարհորդը կարող է ամբողջ օրերով ճանապարհորդել գիւղերում առանց որևէ ծախս անելու, հասնելով ամեն մի գիւղ, նա իսկոյն կը հիւրասիրուի տանուտէրից կամ ուղղակի կարող է մէկի տանը իջևանել իբրև հիւր. նրա բոլոր պէտքերը կը հոգան, ըրան և ձիւն կը կերակրեն. կամ կարող է իջևանել ձգկիթում (եթէ մուսուլման է) և այդ դէպքում գիւղի ամբողջ ժողովուրդը պատրաստ է հոգալ նրա պէտքերը: Քիւրդերի ճանապարհորդութիւնը իրանց երկրում, սովորաբար, այդ ձևով է կատարւում:

Քիւրդերի կանաչք պարսիկների նման չեն ծածկւում տղամարդերից, այլ արձակ համարձակ և բաց շրջում են նրանց մէջ. չադրաներ չեն գործածում:

Ասի կարասիք քիւրդի վրանում կամ տան մէջ շատ քիչ կգրտնէք, բացի գորգերից, կապերտներից, այն ևս ունեւորների մօտ. բաց ամեն մի քիւրդի, նոյն իսկ ամենաաղքատին տանը կը գտնէք մի զոյգ ատրճանակ, մի նիզակ, մի վառօղաման, մի ձի վրանի առաջ կամ սենեակում կանգնած, թամբը մօտին, իսկ դաշոյնը անբաժան է քիւրդից և խրուած է միշտ նրա դօտու մէջ:

Զ. ԶԵԱՂՄՈՒՆՔԸ ՏԱՆ ՄԷՋ:

Թէ տնային և թէ դրսի բոլոր աշխատութիւնները կատարում են կանաչք. այն է վարում են հողը, արածացնում ոչխարը, կթում են տաւարը, վրանների համար թելեր են պատրաստում, չուլաներ, կապերտներ և գորգեր են գործում, դաշտից ձմեռուայ համար վառելիք են ժողովում, խոտ են հնձում և յաճախ ընկերանում են իրանց ամուսիններին և եղբայրներին, երբ նրանք գնում են պատերազմելու, արշաւանք գործելու կամ գողութիւն անելու: Անաչք, ընդհանրապէս, գիտեն ձի նստել և գէնք գործածել, կան և այնպիսիները, որ հռչակուած են իբրեւ նշանաւոր ձի խաղացնող և պատերազմող, օրինակ Ազիզ խան սարգարի կինը:

Տղամարդկանց գլխաւոր պարապմունքը ձիարշաւը, զինավարութիւնը, ասպատակութիւնն և գողութիւնն է: Կինելով խաշնարած և թափառական ժողովուրդ, քիւրդը շատ քիչ է պարապում երկրագործութեամբ. նա ցանում և սերմանում է միայն այնքան, որքան հարկաւոր է տանը մի քանի ամսուայ համար ցորենի պաշար ունենալու. եթէ մի քիւրդ այնքան վարուցանք կարողանայ անել, որ ամբողջ տարուայ համար պաշար պատրաստի, նա իր գիւղի մէջ աչքի ընկնող մարդ է համարւում: Հարուստ աղաները և կալուածատէրերը պարսկական Քիւրդաստանում վերջին 20 տարուայ ընթացքում սկսել են ուշադրութիւն դարձնել երկրագործութեան, գլխաւորապէս բամբակի, բրնձի և ծխախոտի վրայ և ստիպում են «րայաներին» կամ հայ գիւղացիներին իրանց համար վարուցանք անել: Բաց այդ մասին մի քիչ յետոյ կը խօսենք:

Այդպիսի պայմանների մէջ արհեստն ևս չէ զարգացած քիւրդերի մէջ. գերձակ, պաշտագործ և զինագործ, այն ևս միայն դաշոյն շինող—ահա ինչ արհեստ գիտէ քիւրդը, մնացած բոլոր արհեստաւոր-

ները—ոսկերիչ, հիւսն, որմնադիր և այլն կամ հրէաներն են կամ հայերը: Կանայք միայն գիտեն կապերտ և գորգ գործել:

Բայց քիւրդը աննման է իր գլխաւոր արհեստի—ասպատակութեան, ձիարշաւի և զինավարութեան մէջ: Ամեն գիւղում կայ մի մեծ հրապարակ, ուր ամեն օր, առաւօտեան գալիս են ձի ունեցող քիւրդերը և կարգով շար ընկնում. շուտով գալիս է գիւղի աղան կամ տեղացիները իր ծառաներով և զուռնաչիներով: Զուռնան սկսում է փչել, մի ուրիշը խփում է թմբուկը և այդ ժամանակ ձիաւորները ձիարշաւ ու զինավարութիւն են կատարում. նոյնը կրկնում են և երեկոյեան: Եթէ որեւէ կռիւ չլկայ թշնամի ցեղի հետ, քիւրդ տղամարդիկ պարապում են ասպատակութեամբ և գողութեամբ. միայն ծերերը և վախկոտները, թուլամորթները ընդունակ չեն գողութեան ու աւազակութեան, այդպէս է մտածում քիւրդը: Ասպատակութիւնը, գողութիւնը պարծանք է համարւում. ամեն մի աղա կամ ցեղապետ ունի մի խումբ աւազակներ, որոնք նրա հրամանով գնում են գողութեան և գողացածը յանձնում աղաչին, ստանալով մի որոշ բաժինը: Քիւրդերի մէջ երեք տեսակ գողեր կան. երկու երեք հոգի գիշերով գնում են ծակում մէկի գոմի պատը և քշում տանում նրա ձին կամ տաւարը. կամ մի քանի հոգի միանալով հետիոտն գնում են կտրում ճանապարհները և կողոպտում անցորդներին. կամ մի քանի ձիաւորներ հաւաքուելով յարձակւում են կարավանների նախիրներին, վրայ և կողոպտում ու յափշտակում: Եթէ ապրանքի տէրը գտաւ գողին և գողացուածը, գողը պարտաւոր է յետ տալ, բայց ապրանքատէրն էլ պարտաւոր է մի բան տալ գողին, իբրեւ վարձատրութիւն նրա կրած նեղութեան և այդ վարձատրութիւնը կոչւում է քալաքեւան, այսինքն կօշիկ մաշելու փող:

Է. ԱՐԵԱՆ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ.

Մենք արդէն չիշեցինք, թէ որքան վրէժխնդիր հոգու տէր են քիւրդերը: Եթէ մի քիւրդի պապը սպանուած լինի, նրա թողը, ծոռը 50, 100 տարուց յետոյ իր պապի արիւնը կը պահանջի, և վրէժը կը չուծի. միակ դէպքը, որ կարող է կանգնեցնել վրէժխնդրութիւնը, թափուած արեանգինը կամ փրկանք վճարելն է. հասարակ քիւրդի արիւնը գնահատւում է 5 թումանից մինչև 30 թուման (10—60 ռուբլի), իսկ ազնուական քիւրդինը 50—100 թուման, նայելով ցեղին, հարստութեան, քաջութեան և այլն:

Ը. ՀԱՐՍՆԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ, ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀԱՐՁԱՆ.

Քիւրդերը, իբրեւ մահմեդական, թէեւ շարիաթով իրաւունք ունեն չորս կին ունենալու, բայց շատ քիչ է պատահում, որ նրանք բազմակին լինեն. հասարակ քիւրդը, սովորաբար մի կին ունի. Քիւրդ երիտասարդը, երբ կամենում է ամուսնանալ և մէկի աղջիկն ուզել, պէտք է խնամախօս ուղարկի աղջկայ ծնողների կամ եղբայրների մօտ և պարզապէս գնի նրանցից աղջիկը, որովհետեւ առանց որոշ գումար ստանալու, քիւրդը աղջիկ չի տալ. Երբ աղջկայ գինը որոշւում է, տեղի է ունենում նշանդրութիւնը. Սալայն չաճախ պատահում է, որ սակարգութեան մէջ համաձայնութիւն չէ կայանում. փեսացուի համար մեծ ամօթ է թողնել, որ աղջկան ուրիշը տանի, ուստի նա ամպատճառ պէտք է փախցնի նրան. նա միջնորդների միջոցով համոզում է աղջկան, որն և շուտով համոզւում է և պաշմանաւորուելով նրա հետ ժամանակի և տեղի մասին, իր ընկերների օգնութեամբ փախցնում է նրան: Այն ժամանակ աղջկայ հայրը լուր է ուղարկում տղայի ազգականներին, որ եթէ չը վճարեն աղջկայ գինը պէտք է թշնամութիւն սկսուի. սկսում են բանակցել, ցեղի ծերունիները մէջ են ընկնում և հաշտեցնում մի որոշ գումարով. տղան վրձարում է աչդ գումարը և երիտասարդ զոյգը վերադառնում է աղջկայ հօր տունը, ուր կատարւում է հարսանիքը. Եթէ դեռ հաշտութիւն չը կացացած, բանակցութիւնների միջոցին, երկու կողմերը պատահին միմեանց, անպատճառ արիւնհեղութիւն տեղի կունենայ: Եւ ամեն տարի Քիւրդստանում աղջիկ փախցնելու համար բազմաթիւ արիւնհեղութիւններ են կատարւում, պատահում է, որ մի աղջիկ փախցնելու համար երկու կողմից մօտ քսան մարդ է սպանւում: Զատ անգամ էլ պատահում է, որ մի քիւրդ իր քրոջը փոխում է մի ուրիշ քիւրդի հետ և եթէ դրանց մէջ մի որեւէ առաւելութիւն կամ տարբերութիւն է լինում գեղեցկութեան կամ տոհմի ազնւութեան վերաբերմամբ, աչդ տարբերութեան համար վճարւում է մի որոշ գումար: Երբեմն պատահում է նաեւ, որ քիւրդերը փոխանակում են իրանց կանանց կամ մի քիւրդ փախցնում է ուրիշի կնոջ. աչդ դէպքում նոյնն է տեղի ունենում, ինչ որ աղջիկ փախցնելիս:

Պսակը կատարուած է համարւում, երբ հարսն ու փեսան գնան դադու մօտ և նա կտրի նրանց բեաբինը կամ կարդայ սիգան: Ինչ վերաբերում է ամուսնալուծութեան, ահա ինչ պաշմանների մէջ է կատարւում նա. որովհետեւ քիւրդի պսակը կամ քեաբինը բաղկացած է լինում երեք թալաղից, այսինքն մասից, ուստի եթէ մի քիւրդ կամենայ արձակել իր կնոջ, նա պէտք է գետնից վեր առնի 3 քար և

ասի կնոջ. «քո երեք թալաղը էլ արձակեցի» և ասելիս մէկ մէկ քարերը ձգի դետին. դրանով կինը արձակուած կը համարուի. Քիւրդերը շատ անգամ բարկացած ժամանակ վեր են առնում դետնից 3 քար և արձակում են իրանց կնոջ, բայց շուտով փռժանում են. սակայն արձակուած կինը նորից կնութեան առնել ուղղակի անկարելի է. դրա համար անհրաժեշտ է, որ կինը առաջ մի ուրիշի հետ ամուսնանայ, այդ ուրիշը իր յօժար կամքով արձակի նրան և միայն այդ ժամանակ նախկին ամուսինը կարող է նորից քեաբին կապել նրա հետ: Բայց կարող է պատահել, որ երկրորդ մարդը չը յօժարի արձակել կնոջը, բռնի արձակել տալ չէ կարելի, այդ պատճառով քիւրդերի մօտ մի տարօրինակ սովորութիւն կայ. ամեն մի դաջի իր մօտ պահում է մի յատուկ մարդ, որ պէտքէ հարթէ վերոյիշեալ դժուարութիւնը. եթէ մէկը արձակել է իր կնոջ կամ, ինչպէս քիւրդերն են ասում, թալաղն տուել է և, փռժիմանելով, կամենում է նորից կնութեան առնել, նա պահում է կնոջը դազու պահած այդ մարդի հետ, որին անուանում են դազու ետ. դազու էջը նրան մի քանի օր իբրև կին պահելուց յետոյ, արձակում է և այն ժամանակ նախկին ամուսինը կրկին ամուսնանում է նրա հետ. դազու էջը որոշ վարձատրութիւն է ստանում կնոջ ամուսնուց:

Սակայն, շատերը, ի հարկէ չեն ցանկանում որ իրանց կինը, մանաւանդ եթէ գեղեցիկ է և սիրելի, ուրիշին կնութիւն անի, թէկուզ մի կամ երկու օր. այդ անչարմարութեան առաջն առնելու համար կայ մի ուրիշ. էլ աւելի տարօրինակ սովորութիւն. արձակուած կնոջ պսակում են մի խեցեայ ջրամանի (լուէչինի) վրայ. կինը պէտք է մի քանի գիշեր ջրամանը պարկեցնի իր հետ. ապա ջրամանը պէտքէ իր յօժար կամքով արձակի իր կնոջ, բայց նա անշուշտ առարկայ է և կամք չունի, ուրեմն ինչպէս անել. ահա ինչպէս. շարիաթով, երբ տղամարդը մեռնի կամ սպանուի՝ պսակը լուծուած է. ուրեմն պէտք է սպանել լուէչինը, այսինքն կոտրել. եթէ լուէչինը կոտրուեց, պսակը լուծուած է. սակայն շատ էլ հեշտ չէ լուէչինը կոտրել, որովհետև այդպիսի ամուսին — լուէչին կոտրելը քիւրդը համարում է անմեղ արիւն թափել. նա աւելի մեծ սիրով մի տղամարդ կսպանի, քան այդպիսի անմեղ արիւն կը թափի: Բայց գտնուած են աղքատ մարդիկ, որոնք յօժարում են մի քանի թուման փողով անմեղ արիւն թափել, այն է լուէչինը կոտրել:

Պսակով սուտ երդումն ուտելն ևս ամուսնալուծութեան պատճառ կարող է դառնալ. եթէ մի քիւրդ իր պսակով սուտ երդուեց և սուտ երդուելն յայտնուեց, կինը կարող է իրան արձակուած համարել և դուրս գալ գնալ հօր տունը և ամուսինը եթէ կամենայ թոյլ չը-

տալ, պէտք է նրան կամ դազու էշի կամ լուէչնի վրա պսակէ, արձակել տալ և ապա նորից ընդունի իր տունը: Պսակով երգումն ուտելը աչսպէս է կատարւում. դիցուք մի քիւրդ պահանջ ունի մի ուրիշ քիւրդից և սա ուրանում է. պահանջատէրը իրաւունք ունի առաջարկել, որ նա իր կնոջ պսակով երգումն ուտի. այն ժամանակ քիւրդը վեր է առնում գետնից երեք մանր քար և մէկ մէկ նետելով ասում է. «Իմ երեք թալաղս էլ եօթն հաւատքի մէջ (քիւրդերը կարծում են, որ բոլոր աշխարհում 7 հաւատ կայ) դատարկ լինի, որ ես քեզ պարտ չեմ կամ այդ գործից տեղեկութիւն չունեմ»: Այդ երգումից յետոյ պահանջատէրը այլ ևս ոչ մի իրաւունք չունի մի խօսք անգամ ասելու: Քիւրդը աւելի յօժար կը լինի զուռանով երգուելու քան իր պսակով և յաճախ զուռանով սուտ երգւում են, բայց պրսակով շատ քիչ անգամ:

Մեզ յայտնի չէ թէ ուրիշ տեղերի ինչպէս օրինակ, Ռուսաստանի քիւրդերի մօտ, ապահարզանի այդ ձևն ընդունված է, թէ ոչ, բայց ամուսնական սովորական օրէնքները բոլոր քիւրդերի մէջ գրեթէ մի և նոյնն են: Ընտանեկան իրաւունքի շրջանում, ամուսնութիւնը պարտաւորիչ է և չամուսնացած կամ ամուրի երիտասարդը, մանաւանդ եթէ հասակը 25 ից անցել է, ուղղակի պախարալւում է և ենթարկւում իր ցեղի ծաղր ու ծանակին: Արբունքի հասած տղան պէտք է ամուսնանայ, շարիաթով ուղղակի պարտաւորութիւն է դրւում ծնողների վրայ և վարձք է համարւում ամուսնացնել տղաներին և աղջիկներին, հէնց որ սեռական ցանկութիւնը նրանց մէջ երևան է գալիս: Սովորաբար, տղաները 15, իսկ աղջիկները 8—12 տարեկանում են ամուսնանում: Ի հարկէ, քիւրդը ամենից առաջ աշխատում է աղջիկ ուզել իր ազգականների միջից. շատ քիչ է պատահում որ քիւրդը աղջիկ ուզի մի օտար ցեղից. արքելուած է միայն ամուսնանալ քրոջ, հօր կնոջ հետ, կաթնաքրոջ հետ, քենու հետ քանի դեռ կինը կենդանի է, բայց իր եղբօր աչրու հետ քիւրդը կարող է ամուսնանալ և յաճախ, երբ եղբայրը մեռնում է, կինը մարդու է գնում միւս եղբօր: Մինչև որ երէց եղբայրը չէ ամուսնացած, կրտսեր եղբայրը չէ կարող ամուսնանալ, նոյնը և քույրերի վերաբերմամբ: Ամուսնութիւնը թէև կատարւում է ծնողների համաձայնութեամբ, բայց քիւրդ երիտասարդը և աղջիկն ևս միշտ առիթ են ունենում առաջուց տեսնել և հաւանել միմեանց, շնորհիւ այն հտնգամանքի, որ քիւրդերը թափառական ցեղ լինելով, փակ կեանք չեն վարում, և կինը նրանց մէջ բաց համարձակ շրջում է: Ամուսնանալուց յետոյ ևս քրդուհին իր մարդու ստրուկն չէ դառնում, ինչպէս թուրքերի և միւս մահմեդականների մէջ, այլ համարւում է իր մարդի ընկերը և բարեկամը:

Մի քանի խօսք ևս նշանախօսութեան մասին: Մենք ասացինք, որ քիւրդը, երբ կամենում է աղջիկ ուզել, երկու եղանակի է դիմում. կամ գնում է աղջկան ծնողներին, այսինքն պարտաւորւում է որոշ գումար տալ, այն ինչ որ ուրիշ տեղերում կոչում են կալեմ. կամ, եթէ համաձայնութիւն չէ կայանում, փախցնում է աղջկան. փախցնելուց յետոյ ևս նա դարձեալ պէտք է վճարի աղջկայ գինը, եթէ ոչ յաւիտեան թշնամութիւն կը շարունակուի երկու տների մէջ: Եթէ փեսացուն չունի հարկաւոր գումարը, նրան պէտք է օգնեն ազգականները: Նշանադրէքը կատարելուց յետոյ, հարսանիքը կարող է կատարուել միայն այն ժամանակ, երբ փեսան ամբողջովին վճարի խոստացած գումարը, բաց մինչև այդ նա, ընդունուած սովորութեան համաձայն, կարող է գիշերները տեսնուել իր նշանածի հետ, իր ապագայ դոքանչի օգնութեամբ, աղջկայ հայրն ևս գիտէ այդ տեսակցութիւնների մասին, բաց չգիտենալն է դնում: Փեսացուն կարող է մինչև անգամ պառկել աղջկայ հետ և տեւական յարաբերութիւն ունենալ: Դրանից ետոյ, եթէ կամ տղայի կամ աղջկայ կողմից որեւէ անհամաձայնութիւն ծագի, տղան կարող է մերժել աղջկայ ձեռքը եթէ միայն աղջիկը չէ յղիացել. վերջին դէպքում նա անպայման պէտք է ամուսնանայ: Տղան իրաւունք ունի և մի դէպքում ևս հրաժարուել աղջկանից, երբ նրան կոչս չը գտնի: Եթէ ամուսնութիւնը գլուխ չեկաւ և նշանուածները կամեցան բաժանուել, տղի կողմից վճարուած փողն վերադարձնւում է իրան, թէ մեր ժողն աղջիկն է, իսկ թէ մերժողն տղան է: Նրան վերադարձնւում է իր մօրը, նախապէս առնելով նշանադրէքի բոլոր ծախքերը:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԱԽԱՊԱՋԱՐՈՒՄՆԵՐ.

Թլպատութեան օրէնքը, որ յատուկ է մուսուլման բոլոր ժողովրդներին, գոյութիւն ունի և քիւրդերի մէջ այն տարբերութեամբ, որ քիւրդերը թլպատում են ոչ միայն արու, այլ և էգ զաւակներին:

Վերին աստիճանի սնապաշտ են քիւրդերը, ինչպէս բոլոր կիսավայրենի ցեղերը. ուր որ գնաք, միշտ կը տեսնէք մի անպտուղ ծառ, որի վրայ ուխտաւորները կապել են գոյնզգոյն ճոթի կտորներ, այնպէս որ շատ անգամ ծառը չէ երևում այդ կտորների տակ: Դւրաքանչիւր քիւրդ, եթէ սրտում մի բաղձանք ունի, գնում է այդ ծառի առաջ ուխտ անելու. նա ծունկ չոքելով, երկրպագութիւն է անում ծառին, կապում է նրա մի ճիւղից իր հետ բերած լաթը և բոլորովին հաւատում է, որ իր ուխտը կը կատարուի: Այդպիսի ուխտ կատարելու յաճախ գնում են աղջիկները, երիտասարդները ու նորահարսերը: Բա-

ցի ծառերից ուխտատեղիներ համարւում են զանազան շէյխերի գերեզմաններ և պտղաբեր ծառերի փոքրիկ անտառներ. այդ տեսակ անտառներին ամենևին չեն դիպչում. նրանց ծառերի պտղից ուտում են իրա անտառի մէջ, բաց պտուղը, թաց կամ չոր փաշտ այդ անտառից տուն բերելը սաստիկ արգելուած է և քիւրդերը չափազանց վախենում են որևէ մի փաշտ այդ անտառներից գործածելու, այնպէս որ օտար ցեղերի մէջ առակ է դարձել, թէ քիւրդը որքան որ վախենում է ուխտատեղիների փաշտը գործածելուց, նրա մի հազարերորդ մասը Աստծուց չէ վախենում:

Տարին մի քանի անգամ քիւրդերը համախմբւում են այդպիսի ուխտատեղիներում. մնում են մի քանի օր, ուտում, խմում, զուարճանում են, ձիարշաւ, զինախաղ են սարքում, պարում են և վերադառնում իրանց տեղերը. զուռնան, թմբուկը անպակաս է լինում: Այդ հանդէսների կամ, ինչպէս քիւրդերն են անուանում, սէյրի (զբօսանք) ժամանակ, շարունակ կռիւներ են պատահում և գրեթէ ոչ մի կռիւ առանց արիւնհեղուլթեան չէ անցնում: